

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ.

ԵՐԿՈՒ ԱՆՀԵՏԱՑԱԾ ՔԱՂԱՔՆԵՐ:

— Լուսինայի Նիվա (Նիվա) շաբաթաթերթից:

Երկու տիեզերական քաղաքների կեանքը — Բաբիլոնի եւ Նի-
նուէի — առաջին տեղն են ընդունում փառահեղ երեւոյթների մէջ,
որոնց վրայ ճառումէ հին պատմութիւնը: Արդէն 2000 տարի
կլինի, որ նոքա կործանուած են, բայց վերջին ժամանակների
մարդկային ձեռաց ամենասքանչելի կերտուածներն անգամ չեն
նուազացնում այն տպաւորութիւնը, որը մեզ վրայ արտադրում
են այդ ահագին շինուածքների զանգուածները, թէպէտ մեր
աչքերին երեւում են այժմ միայն նոցա աւերակներն ու բե-
կորները:

Այդ երկու քաղաքները շրջապատները չունին իւրեանց նմանը
ներկայ ժամանակում: Բաբիլոնը ունէր 490 քառակուսի քիլո-
մետր (450 վերստէն աւելի), այսինքն չորս անգամ մեծ գետ-
նի հրապարակ, քան թէ այժմեան Լոնդոնը: Իսկ Նինուէ, որի
շինութեանց վրայ, ութ տարուայ ընթացքում, անդադար բա-
նել են 140,000 մարդիկ, ունէր շրջապատ 104 քիլոմետր (100
վերստի չափ): Երկու քաղաքներն էլ լիքն էին շքեղ շինուածք-
ներով, որոնցից ոմանք մինչեւ ցայժմ համարվում են աշխարհի
հրաշալիքը:

Այն ժամանակուայ պատմագիրներից թողած ստորագրու-
թիւնները այն փաստերի եւ հետախուզութեանց հետ միասին,
որոնք ձեռք են բերուած փորուածքներով՝ բաւական ծանո-
թացնում են մեզ այդ սոսկալիթիտար տիեզերական քաղաքնե-
րի եւ նոցա ամենագլխաւոր յիշատակարանների հետ:

Բաբիլոնը մայրաքաղաք էր նոյն կողման երկրի, որ տարած-
վում էր ընդարձակ Սինաարայ ձորի մէջ Եփրատայ ներքին կող-
մում, այդ գետի երկու ափանց վրայ, 15 մղոն հեռաւորու-
թեամբ ի Բաղդատայ, 40 մղոն Պարսկային ծովածոցէն եւ 130
մղոն Երուսաղէմից: Նորա հիմնարկութեան ժամանակը եւ
հանգամանքը կորչում են նախապատմական մթութեան մէջ,
կարծում են, թէ քաղաքը կար արդէն առաջին Բաբիլոնացւոց թա-

գաւորութեան ժամանակ, իբր 2000 տարի Քրիստոսի ծնունդից
տուած՝ բայց նորա ամենածաղկեալ շրջանը սկսուած է Ասորւոյ
թագաւորութեան կործանումից՝ Նաբուքադոնոսորայ եւ նորա որ-
դի Նաբուգոդոնոսորայ ժամանակներից, Վերջինը անթիւ գանձ
մասնեց քաղաքի ընդարձակելու եւ զարդարելու համար։ Բա-
րիլոնը մեցերորդ դարում նախ քան զՔրիստոս ունէր երկու
միլիոն բնակիչներ, որոնց մասին, ինչպէս տեղեկութիւն է հա-
սել մեզ, եղել են հեշտասէր, փափկասէր եւ անառակ մարդիկ։

Այդ ահագին քաղաքը քառանկիւնի ձեւ ունէր շրջապա-
տած պարիսպներով, բարձրութեամբ մինչեւ 10 սաժէն եւ
լայնութեամբ 7 սաժէն։ Նորա վրայ կարող էին ազատ գնալ
շարքով մէկ քանի կառքեր։ Հարկւաւոր պղնձեայ դռներ փա-
կուածին քաղաքի մուտքը, եւ պարիսպների վրայ շինուած էին
պահապանների համար 200 աշտարակներ։ Բացի արտաքին
պարսպից կային միջին եւ ներքին քաղաքային պարիսպներ սա-
լաքարերից շինած, հոյսկապ կամուրջը միացնումէր քաղաքի
երկու մասը, որոնք անջատվումէին Եփրատ գետով։ Քաղաքը
շինուած էր շատ կանոնաւոր, լայն եւ ուղղագիծ փողոցներով։
Յիշեալ կամուրջի մօտ գետի երկու ափանց վրայ բարձրանու-
մէր Ակրոպոլիսը (աբքայական գուռն), որ բազկանումէր եր-
կու հսկայամարմին պալատներից՝ շրջապատած իրեք կարգ
պարիսպներով։ Այս տեղումն էր բնակում Նաբուգոդոնոսորը,
իսկ մերձերում՝ Մեծն Աղէքսանդր։ Ակրոպոլիսի շինուածքը ան-
սովոր, հողուագիւտ գեղեցկութիւն ունէր, զարդարուած ամե-
նակարելին շքեղութեամբ։ Քաղաքի մէջ կային էլի շատ ու-
րիշ շինութիւններ եւ պալատներ, որոնց մէջ՝ ինչպէս ճար-
տարապետութեան հրաշալիք յայտնի էր Շամիրամայ պալատը։

Այս թագուհին շինել էր նոյնպէս կախաղանաւոր այգիներ,
որոնք գանձվումէին Ակրոպոլիսի մօտ՝ Եփրատայ արեւելեան կող-
մում եւ կազմումէին Բաբիլոնի արժանաւոր յիշատակներից ա-
մենագլխաւորը։

Այդ այգիները պալատների շինուածքի շարքեր էին՝ բարձրա-
ցած տերրառանման սիւնների եւ կամարների վրայ, տերրապների
(Դաւաճայ, Էւաթիլ, Լաբրաթի), արճեկայ յատակի վրայ սփռած էր այն-
քան հող, որքան հարկաւոր էր ամենախոր արմատ ունեցող ծա-
ւերի համար։ Ձրհանների միջոցով Եփրատ գետից ջուրը ան-

ցուցած էր այդու ամեն կողմերը: Իւրաքանչիւր տերրասի բարձրութիւնը 60 սանաչափ էր, այնպէս որ ծառերի կատարները ներքին տերրասի մակի տվողների ոտներին էին հասնում՝ եւ չէին ծածկում հեռաւոր տեսարանը: Այն, հոյակապ սանդուղքները տանումէին վերին տերրասները. իսկ նրանցից ամենից բարձրի վրայ, բացի շատրուաններից, կային էլի մէկ քանի շքեղ արքայական հովանոցներ, ուստի երեւումէր շրջագոյ տեղերի հոյակապ տեսքը:

Բարխոնի ամենանշանաւոր յիշատակարանները գտնուումէին քաղաքի արեւմտեան մասում, Բէլ շատուծուն նուիրած տեղում բարձրանումէր ահագին աշտարակ, որը դեռ երուսողէմի աւաւերման ժամանակ (588 թ.) Նաբուգոդոնոսորը հրամայեց շինել նոյն իսկ տեղում եւ մի եւ նոյն հիմքի վրայ, ուր էր հին Բարխոնի աշտարակը: Սրի մասին գրուած է Սուրբ գրքի մէջ: Աշտարակը ունէր 96 սափէն բարձրութիւն եւ բարձրանումէր քառակուսի բրգաձեւ եւ տերրասման հիմքի վրայ 98 սափէն բարձրութեամբ եւ 12 սափէն լոյնութեամբ: Նա բազկանումէր ութն զանազան գոյնի յարկերից: Մեծ օձապտոյտ սանդուղքը պատումէին այդ զարմանալի շինութեան բոյսրափքը, որ համարվումէր նուիրական. իսկ նորա գագաթի վրայ էր տաճարը: Նոյն տեղումն էր աշտարակը եւ օտարաբաշխական դիտանոցը: Աշտարակի ներքին յաջիկ պենեալներում պահպանւում էին զանազան թանկագին կարասիք, ահագին ոսկեայ որձաններ եւ կուսքերի պատկերներ, որոնց բոլորի արժողութիւնը սահմանած է 13½ միլիոն բուբլի: Քաղաքի հիւսիսային մասը վերջանումէր չափազանց մեծ բուրգով, որ քաղաքի երեւելի տեղերից մէկն էր, որովհետեւ նա էր ամենահին շինութիւնը, Բէլ շատուծու գերեզմանը եւ պատգամախօսի բնակարանը: Մեծն Աղէքսանդր քաղաքը մանելուն պէս 330 թ. (նոյն բան զՔրիստոս) խոտաւալ Բաբելոնացոյ նարոգել Բելայ աւերակ գերեզմանը երկու տնախայ միջոցում, բայց չկարողացաւ մաքրել բուրգը վայր թափած քարերից, չնայելով որ այդ բոլոր ժամանակը գրա վրայ բանումէին օրական 10,000 մշակներ: Նորա մահը արգելք եղաւ աւարտ հասցնելու իւր խոտաւալը, որ մեռաւ Նաբուգոդոնոսորայ սղաւաթի մէջ:

Այս հսկայ շինութեանը կից էին ուրիշներն էլ, զոր օրինակ տաճարն նկնիրայ, Սողանի, Աօ եւ Երրորդական սրբավայրն — տաճարն նամայ չաստուծոյ, որոնք շատ նշանաւոր եւ մեծագործ շինութեանքն էին, Քաղաքի բնակիչների մեծ մասը ընկնում էր Ակրոպոլիսից դէպի հարաւ, քառանկիւնւոյ բոլոր հարաւ-արեւելեան անկիւնը մշակած դաշտորայք էին, որոնցից ոչ հեռի գտնվում էր Դանիէլ Մարգարէի պատմութեան մէջ յիշուած երեւելի Դէերա դաշտը, որ մինչեւ ցայժմ այդպէս է կոչվում, որի վրայ կար կանգնած ահագին Մակագան սիւնը, որի մնացորդները այժմ էլ զարմացնում են տեսնողներին:

Ժամանակը սկսեալ ի 2240 մինչեւ 2050 թ. նախ քան զՔրիստոս՝ համարվում է առաջին ծագկեալ շրջանը Բաբելոնի՝ ինչպէս աշխարհի ամենամեծ քաղաքի եւ ինչպէս մայրաքաղաքի հին Բաբելոնացւոյ առաջին թագաւորութեան, հիմնած Նեբրոլթից: Ասորաց տիրապետութեան ժամանակն էլ (2050 մինչեւ 625 Ն. Ք.) Բաբելոնը առաջնութեան մէջ մրցում էր Նինուէի հետ: Բայց Բաբելոնի համար ամենափառաւոր ժամանակի շրջանը 625-էն մինչեւ 538 թ. նախ քան զՔրիստոս, երբ մայրաքաղաք էր Նոր — Բաբելոնացւոյ թագաւորութեան: Այն ժամանակուայ նորա շքեղութեան մասին խօսում է եւ հին Կտակարանը:

Բաբելոնի նուաճուելուց յետոյ Կիւրոս Պարսից թագաւորից՝ ոկրում է քաղաքի անկումը: Մեծն Աղեքսանդր կամեցաւ նորան անել կենդրոն իւր կայսերութեան, բայց այս միտքը չիրագործուեց նորա մահից յետոյ: Սելեւկիացւոյ տիրապետութեան ժամանակ քաղաքը գատարկվում է բոլորովին եւ քրիստոնէութեան առաջին դարումը աւերակաց կոյտեր էին միայն մնացած, ձգուած հարաւից դէպի հիւսիս վեց մղոն տարածութեամբ: Արաբացւոյ իշխանութեան ժամանակ Բաբելոնի անունը իսպառ անհետացաւ պատմութեան մէջէն: Այդ անունի փոքրիկ գիւղը՝ շինուած համարեա թէ նոյն տեղում՝ յիշեցնում է միայն հին մեծատարած քաղաքը:

Այդ աւերակները գէթ ժ.թ. դարէն դարձան առարկայ խիստ գիտնական հետազօտութիւնների, որոնք մատակարարեցին շատ հետաքրքիր տեղեկութիւններ ահագին քաղաքի շինութեան մասին: Այդ աւերակները Եփրատայ անապատի մէջն են, Բաղդատից դէպի հարաւ եւ կազմում են բեկորների ամբողջ լեռներ:

Նրանցից գուրս են ձգվում վեց բարձրութիւններ, որոնք վերելում յիշուած շինութիւնների մնացորդներն են կազմում: Փառաւոր պալատների եւ տաճարների անթիւ աւերակների մէջ, որոնք ծածկուածին փողոցները եւ Բաբելոնի հրապարակները, այժմ բնակումեն աւելծնէր, գայլեր, բորենիներ, շագալիք, . . . : Ծաղկեալ կախաղանաւոր այգիների տեղում տարածվում են անվերջ եղեգնաշամբ եւ Սօսինւոյ անտառ: Մէկ քանի տեղերում, ինչպէս Նաբուգոդոնոսորայ պալատի եւ աշտարակների մէջ, փորել գտել են արձանների, կարասիքների եւ զարդերի մնացորդները: Պատմաբանական մասին աւելի գին ունեցող տղիւսներն են բեւեռածեւ գրերով: Աշտարակի հիմը փորել են, բայց քանի մի յարկերի մասը գեռ ամբողջ մնացել է եւ բարձրանում են մինչեւ 36 սաժէն: Նոյնպէս ամբողջ է մնացել քաղաքի ներքին պարսպի մասը: Արգէն հարիւրաւոր տարիների ընթացքում այդ գեանի աւերակների քարերի կոյտը մատակարարում են շինութեան նիւթ միւս քաղաքների համար: Եւ եփրատայ ներքեւում եւ վերելում գեռ այժմ գնում են նաւեր՝ բեռնաւորուած նախկին տիեզերական մայրաքաղաքի քարերով եւ շատ քարոռշների եւ փոխադրողների համար այդ աւերակները կազմում են միակ վառատի:

Համանման բախտի փիճակեցաւ եւ Նինուէն: Ասորւոյ թագաւորութեան հին մայրաքաղաքը, որ շինուած էր Տիգրիս գետի վրայ, եւ վաղուց չէ որ գտնուել է:

Յունաց պատմագիր Ատեսիասայ ասելով, (որ ապրումէր Պարսից թագաւորի դրանը ինչպէս բժիշկ 400 տարի նախ քան զՔրիստոս) նա հիմնուած էր Նինոսից (2100 թ. Ն. Ք.), Բաբելոն տանը եւ Մարաստանը նուաճելուց յետոյ, նա որոշեց շինել մի այնպիսի քաղաք, որ իւր չափով գերազանցէր այն ժամանակվայ բոլոր քաղաքներից եւ որոնք պիտի շինուէին յետոյ: Պարսպը, որ պատուէր քաղաքը, այնպէս լայն էր եւ ընդարձակ, որ նրա վրայ կարող էին շարքով չորս կառքեր երթալ. 17 սաժէնի մօտ բարձրութիւն ունէր, զարգարուած 1500 աշտարակներով, իւրաքանչիւրը 30 սաժէն բարձրութեամբ: Պարսպի գրծադրութիւնը մասամբ ամբողջ մնացած է մինչեւ ցայժմ. բայց Ատեսիասը այս թիւերը չափազանց է համարում: Նինուէն լինելով հարիւր տարիների ընթացքում Ասորւոյ թագաւորութեան

մայրաքաղաքը եւ թագաւորների բնակութեան տեղը, քանի մի անգամ նուաճուել է եւ դատարկացել եւ 606 թ. Ն. Փ. բոլորովին աւերակ դարձաւ Մար Կիւքսարի եւ Բաբելոնացի Նաբուքադնէսարայ ձեռքով։ Այնուհետեւ էլ չնորոգուեցաւ եւ նորա տեղ բռնեց Բարիլոնը։ Ասորեստանի թագաւորանիստ քաղաքը աւերուած եւ մոռացուած կար. եւ մինչեւ անգամ Մեծին Աղէքսանդրի պատմագիրները նրա մասին չեն յիշատակում, թէպէտ պատերազմը Գաուգամէլի մէջ՝ տեղի ունեցաւ, ոչ հեռի նորա աւերակներից։ Շատ դարերի ընթացքում չէին իմանում անգամ, թէ ո՞ր տեղ է գտնուում Նինուէն, Տիգրիսից դէպ ի հիւսիս, արեւելք, արեւմուտք՝ թէ դէպի հարաւ։

Միայն մեր դարու փորուածքները յայանեցին նորա իսկական տեղը։ 1880 թուականին երբ անձրեւից յետոյ բացուել էր արեւաատրեայ մեծ տափակ քար մակագրութիւններով եւ պատկերներով, այն ժամանակ Անգղիացւոց հիւպատոս Րիք Հրամայեց փորել այդ տեղը, ուր գտնուեցան էլի շատ տափարակ քարեր։ Նորանից աւելի յաջողութիւն ունեցան Գաղղիական հիւպատոս Բօտաա եւ Անգղիական—Վէարգ, որոնք բացին պալատների եւ շատ քանդակագործ ուրիշ մնացորդների ամբողջ հիմեր։ Բացուեցան Ներքովթայ եւ Ահնէքերիմայ պալատները ամբողջ սինեակների շարքով եւ դահլիճներով, որոնցից շատերը 30 սաժէն երկայնութիւն ունէին եւ շքեղ զարդարուած։ Հենց այն ժամանակ գտնուեցան շատ թանգագին պատկերներ, մարդկանց եւ անասնոց արձաններ, զէնքեր, պղնձեայ, փղոսկրեայ, կճեայ, ալէքստրեայ եւ սպակեայ անօթներ եւ կարասիք. նոյալէս անթիւ անհամար արձանագրութիւններ։ Պալատների մուտքում շատ անգամ հանգիպումեն 9 կամ 10 արշին երկայնութեամբ թեւաւոր առիւծի ձեւեր մարդոյ կերպարանքով եւ շատ անգամ քաջ Ներքովթայ պատկերով։ Պատերի վրայ Ասորւոց բնտանեկան կեանքի ձեւակերպութիւններն են։ Զարդարանքը եւ թանգագին իրերը կրումեն իւրեանց վրայ կնիք իւր տեսակի մէջ բարձր զարգացման աստիճան։ Մանաւանդ շատ անգամ հանգիպումեն ոյգ գոռոզ եւ հզօր ազգի յաղթութիւնների պատկերները։ Զօր օրինակ քաղաքի պաշարումները, գերիների եւ յաղթուածների քշիլը (տանկլը), գլխատած մարդոց ցուցակագրութիւնը, թագաւորների հոյակապ կառքով մուտքը՝ շրջա

պատած պալատականներով: Նոյնպէս նկարուած են որսորդութիւններ, որոնց մէջ մասնակցել են կանայք, որոնք հեծած ձիերի վրայ ընկած են առիւծների եւ վագրների ետեւից գեղարդները ձեռքներին: Այդ բոլորը հին պատմագիրների ստորագրութիւնների հետ համաձայն են: Իսկ եթէ իշխանները չէին ցանկանում անտառները եւ լեռները որսի երթալու, այն ժամանակ կարճ լինէր որսորդութիւն անել պարտէզներում, (парк), որոնք կից էին պալատներին: Սակայն սորա մասին ի շարտ այսոց առուած է եւ Դանիէլի մարգարէութեան մէջ: Այդ շրջապատ անտառների մէջ (парк) առանձին վանդակներով պահուած էին առիւծներ, գէպի վանդակները կրկէսն էր, որի մուտքը պահուած էին զինւորներ, աջ ձեռքին գեղարդ, իսկ ձախ ձեռքին մեծ շներ՝ շղթաներով: Վանդակների մօտ կար արկղ, որի ձեւը փոքրիկ գանուած է Նինուէում, այդ արկղի մէջ տեղաւորուած էր մարդ, որ բաց էր անում վանդակի դռները, երբ հարկաւոր լինէր անտառները բաց թողնել կրկէսի մէջ: Աւրեմն գանուած քանդակագործ իրերով ծանօթանում են այն ժամանակուայ սովորութիւնների եւ Ասորոց պալատների շքեղութիւնների հետ: Իսկ բազմաթիւ բեւեռաձեւ գրերը, արգէն մասամբ բացատրուած լինելով, տալիս են այնպիսի պամօրանական հարուստ նիւթ, որ փորուածքների վրայ արած աշխատանքն ու ծախքը վարձատրված են աւելորդութեամբ:

(Թարգմ.)

Զ. Տ. Զատարեանց

ԹԻՒՐ ԳԱՂԱՓԱՐ

ՀԱՅ ԳՊՐՈՅՆԱՐԻ ՄԵՍԻՆ.

Բարին՝ չար եւ չարը՝ բարի անուանել ու համբաւել յատուկ է միմիայն այնպիսի անձանց, որոնք կամ իսկապէս են՝ եւ կամ դիպրոս-բեւեռ են՝ կամ յամառ-բեւեռ՝ եւ կամ մի որպէս եւ եղէ կրօն հաւատք են:

Այն ողջամիտ անձն կներէ իրան ուրանալ Հայոց ծիսական եւ թեմական գպրոցների՝ Հայ ազգին հասուցած օգուտները, ի նկատի առնելով այն նիւթական եւ բարոյական նեղ եւ անձուկ շրջանը, որով նոքա գոյութիւն են ստացել եւ պահպանուել